# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք, ՀՀ
Արարատի մարզ, գ. Բարձրաշեն, Հեռ. (091)946061 ,

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՄԱ
ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅ

N 25
*17 դեկտեմբեր 2015թ.*

Հարգելի պարոն Ռ.Աբրահամյան

Կից ներկայացվում է Բարձրաշեն համայնքի ավագանու 11.12.2015թվականի թիվ 10 հերթական նիստի թիվ 30-34 որոշումները:

Առդիր հինգը թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Սուրիկ Սարգսյան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԲԱՐՁՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ *04200478*

*Կատ. Աշխատակազմի քարտուղար Ն. Մարգարյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 30

## ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼՈՎ <<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ՝
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու հերթական թիվ 10 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Համայնքի 2015թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

2.Բարձրաշեն համայնքի 2016թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանմանումը:

3.Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի, գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքացափերի հաստատումը:

4.Ընթացիկ հարցեր:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 31-Ն

## ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Ելնելով անհրաժեշտությունից համայնքի 2015թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 04.05.01.59 գործառնական դասակարգման 5112 հոդվածից պակասեցնել 700.000դրամ ավելացնելով 08.01.01.52գործառնական դասակարգման 5129 հոդվածին՝ հանգստի գոտիների և զբոսայգու կառուցման համար:
2. 09.08.01.51 գործառնական դասակարգման 5112 հոդվածից պակասեցնել 108.000դրամ, ավելացնելով, 08.01.01.52 գործառնական դասակարգման 5129 հոդվածին՝ հանգստի գոտիների և զբոսայգու կառուցման համար: .
3. 06.04.01.51 գործառնական դասակարգման 5129 հոդվածից պակասեցնել138.000դրամ ավելացնելով 08.01.01.52 գործառնական դասակարգման 5129 հոդվածին՝ հանգստի գոտիների և զբոսայգու կառուցման համար:
4. 01.01.01.51 գործառնական դասակարգման 5122 հոդվածից պակասեցնել 44.000դրամ, ավելացնելով 08.01.01.52 գործառնական դասակարգման 5129 հոդվածին՝ հանգստի գոտիների և զբոսայգու կառուցման համար:
5. 01.01.01.51 գործառնական դասկարգման 4251 հոդվածից 100.000դրամ տեղափոխել 10.07.01.54 գծառնական դասակարգման 4726 հոդվածին՝ տխրության նպաստ վճարելու համար:
6. 01.01.01.51 գործառնական դասակարգման 4241 հոդվածից 150.000դրամ, իսկ նույն գործառնական դասակարգման 4231 հոդվածից 50.000դրամ տեղափոխել 10.07.01.54 գործառնական դասակարգման 4729 հոդվածին՝անապահով ընտանիքներին օգնություն տալու համար:
7. 01.01.01.51 գործառնական դասակարգման 4215 հոդվածից 40.000դրամ տեղափոխել 05.02.01.55 գործառնական դասակարգման 4213 հոդվածին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ

2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ

3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ

4. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 32-Ն

## ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղականտուրքերիևվճարներիմասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով` համայնքի ավագանին որոշում է.

Բարձրաշեն համայնքում սահմանել 2016թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը` համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՍՈՒՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Բարձրաշեն համայնքի ավագանու
"11" դեկտեմբերի 2015թ. Թիվ 32-Ն
որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՒ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբեկտների համար՝

ա) մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201 ք.մ.-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բբ) 501ք.մ.-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բգ) 1001-ից 3000ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 17500 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 750 դրամ.

դ) 20 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1250 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման , արդիականացման , աշխատանքների (բացառությամբՀայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 750 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրուքչաչափի, կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրոնքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 1250 դրամ:

1-3 կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օր՝ մեկ ք.մ. համար 350դրամ.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 150000 դրամ:

գ) խանութներում, կրպակներում,տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 30000 դրամ:

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.
գ) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

7.Համայնքի տարաշքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համա՝ 1000 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 3000 դրամ:

9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 300 դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

1.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար՝1000 դրամ:

2.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու համար կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանում կազմակերպելու համար, յուրաքանչյուր բնակչի համար աղբահանման վճար սահմանել ամսական 05դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ն.ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 33-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ, 26-րդ և 32-րդ հոդվածի 5-րդ կետով՝ավագանին որոշում է.

Հաստատել 2016թվականի համայնքի ղեկավարի դրույքաչափը, գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ա/ համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի՝ համաձայնթիվ 1 հավելվածի.

բ/ մանկապարտեզի աշխատակազմի՝ համաձայն թիվ 2 հավելվածի

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԽԱՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1
Բարձրաշենի գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի 11 դեկտեմբերի N 33-Ն որոշմամբ

# ԲԱՐՁՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը - 19
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | 2015 թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) | 2016թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 180.0 | 200.0 |
| *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆՊԱՇՏՈՆՆԵՐ* | | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 120.0 | 150.0 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 107.0 | 120.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 106.0 | 127.0 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 71.8 | 91.0 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/ | 1 | 70.8 | 90.0 |
| | | | |
| *ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ* | | | |
| | | | |
| Գեղմասվար | 1 | 70.8 | 77.9 |
| *ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ* | | | |
| Բանվոր | 1 | 66.2 | 72.8 |
| Պահակ | 1 | 66.2 | 72.8 |
| Հավաքարար | 1 | 66.2 | 72.8 |
| Ընդամենը | | 925000 | 1074.3 |

Աշխատակազմի քարտուղար Ն.Մարգարյան

*ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ / հաստիքացուցակը կարող եք կցել/*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | *2015թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)* | *2016թ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/ՀՀ դրամ/* |
|---|---|---|---|
| վարիչ | 1 | 137.0 | 137.0 |
| դաստիարակ | 2 | 135.0 | 170.0 |
| դայակ | 2 | 72.8 | 145.6 |
| խոհարար | 1 | 72.8 | 72.8 |
| հաշվապահ | 1 | 72.8 | 72.8 |
| պահակ | 1 | 72.8 | 72.8 |
| տնտեսվար | 1 | 72.8 | 72.8 |
| | | | |
| | | | |
| Ընդամենը | | 636.0 | 743.2 |

Աշխատակազմի քարտուղար Ն.Մարգարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 34

## ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2.000.000ԴՐԱՄ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով համայնքի բյուջեի հնարավորությունները և համայնքի առջև ծառացած խնդիրները, համայնքի ավագանին որոշեց՝

Ընթացիկ տարում անրադառնալ վերը նշված առաջարկին և հնարավորության դեպքում քննարկել:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԲԱԲԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ